ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02

ք.Երևան «25» «12» 2020թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սպասարդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների լվացման և նմանատիպ** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է Պայմանագրի Հավելված №1-ով նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված № 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2. Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3. Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **466 000 (չորս հարյուր վաթսունվեց հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի 7.13 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրով նախատեսվող վճարման ժամանակացույցով

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի (պայմանագրի 7.13 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի) այն չափաբաժնի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի №№ 1; 2 և 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13. Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Սպասարդ» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Գ.Լուսավորիչ 3/3
ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 90011018646	ՀՀ 1570012422860100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02568302
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«Սպասարդ» ՍՊԸ-ի տնօրեն
Գ. Գուլյան	**Ս. Գևորգյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«25» «02» 2020թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Գ. Գույան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Սպասարդ» ՍՊԸ-ի
տնօրեն
Ա. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(<< դրամ)

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ընդհանուր դրությունը	Ակնկալվող տարողությունը	Միավոր ընդհանուր տարողությունը	մատուցման Ժամկետը	մատուցման հասցեն *
1	50111180/502	**Սեղան թափքով ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայություններ** **1. Գործողությունների հաջորդականությունը՝** 1.1. Ավտոմեքենայի թափքի արտաքին լվացման եղանակը՝ բարձր և ցածր ճնշման ջրի փոշիացման սարքերի միջոցով, առանց հպման (ոչ խոզանակային), ավտոմեքենաների լվացման համար նախատեսված հատուկ նյութերով և հեղուկներով, 1.2. Ավտոմեքենայի թափքի արտաքինը պետք է մաքրվի օգտագործված բոլոր նյութերից և հեղուկներից՝ բարձր ճնշմամբ փոշիացված ջրով, 1.3. Ավտոմեքենայի թափքի արտաքին փայլեցում նախատեսված հատուկ նյութերով և հեղուկներով, 1.4. Ավտոմեքենայի ապակիների մաքրումը և լվացումը նախատեսված հատուկ նյութերով, հեղուկներով և ջրով, ցածր ճնշման տակ, ապակիներից բոլոր միներալ նյութերի մաքրում՝ չորացումից հետո առանց նստվածքների, 1.5. Ավտոմեքենայի սրահի և բեռնախցիկի մաքրումը՝ ավտոմեքենաների սրահի մաքրման համար նախատեսված հատուկ մաքրող և փայլեցնող նյութերով և միջոցներով, 1.6. Սրահի գորգերի խոզանակով մաքրում կամ ռետինե գորգերի լվացում, 1.7. Կաշեպատ ավտոմեքենաների նստատեղերի մշակում նախատեսված հատուկ նյութերով, 1.8. Շարժիչի արտաքին և հարակից սարքավորումների լվացում (Պատվիրատուի ներկայացուցչի պահանջով): 2. **Ծառայությունը մատուցողին ներկայացվող և անհրաժեշտ պահանջները կամ պայմանները** 2.1. Ավտոլվացման կայանը պետք է գտնվի ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք, Շրջակա միջավայրի նախարարություն հասցեից մինչև 1000 մետր հեռավորության վրա: 2.2. Ավտոլվացման կայանը պետք է ունենա մինչև 5 մեքենայի համար նախատեսված անվճար կայանատեղի: 2.3. Ավտոլվացման կայանի աշխատանքային ժամերը՝ 07:00-22:00: 2.4. Մեկ ավտոմեքենայի լվացման ծառայության մատուցման առավելագույն տևողությունը 40 րոպե: 2.5. Ծառայությունների մատուցման նպատակով լվացման կտրոնների տրամադրում՝ մեկ կտրոնը մեկ ավտոմեքենայի ամբողջական լվացման (առանց շարժիչի արտաքին և հարակից սարքավորումների լվացման) կամ շարժիչի արտաքին և հարակից սարքավորումների լվացման համար: 2.6. Մեկ ավտոմեքենայի համար ծառայության մատուցման սկիզբը Պատվիրատուի ներկայացուցչի բանավոր պահանջից 40 րոպեի ընթացքում: **3. Ավտոլվացումների կամ նմանատիպ ծառայությունների քանակը՝ 190:**	դրամ	**304000**	1	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15-ը	ք.Երևան, ծառայությունը մատուցողի հասցեում

2	50111180/503	**Ամենագնաց ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայություններ** 1. **Գործողությունների հաջորդականությունը՝** 1.1. Ավտոմեքենայի թափքի արտաքին լվացման եղանակը՝ բարձր և ցածր ճնշման ջրի փոշիացման սարքերի միջոցով, առանց հպման (ոչ խոզանակային), ավտոմեքենաների լվացման համար նախատեսված հատուկ նյութերով և հեղուկներով, 1.2. Ավտոմեքենայի թափքի արտաքինը պետք է մաքրվի օգտագործված բոլոր նյութ երից և հեղուկներից՝ բարձր ճնշմամբ փոշիացված ջրով, 1.3. Ավտոմեքենայի թափքի արտաքին փայլեցում նախատեսված հատուկ նյութերով և հեղուկներով, 1.4. Ավտոմեքենայի ապակիների մաքրումը և լվացումը նախատեսված հատուկ նյութերով, հեղուկներով և ջրով, ցածր ճնշման տակ, ապակիներից բոլոր միներալ նյութերի մաքրում՝ չորացումից հետո առանց նստվածքների, 1.5. Ավտոմեքենայի սրահի և բեռնախցիկի մաքրումը՝ ավտոմեքենաների սրահի մաքրման համար նախատեսված հատուկ մաքրող և փայլեցնող նյութերով և միջոցներով, 1.6. Սրահի գորգերի խոզանակով մաքրում կամ ռետինե գորգերի լվացում, 1.7. Կաշեպատ ավտոմեքենաների նստատեղերի մշակում նախատեսված հատուկ նյութերով, 1.8. Շարժիչի արտաքին և հարակից սարքավորումների լվացում (Պատվիրատուի ներկայացուցչի պահանջով): 2. **Ծառայությունը մատուցողին ներկայացվող և անհրաժեշտ պահանջները կամ պայմանները** 2.1. Ավտոլվացման կայանը պետք է գտնվի ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք, Շրջակա միջավայրի նախարարություն հասցեից մինչև 1000 մետր հեռավորության վրա: 2.2. Ավտոլվացման կայանը պետք է ունենա մինչև 5 մեքենայի համար նախատեսված անվճար կայանատեղի: 2.3. Ավտոլվացման կայանի աշխատանքային ժամերը՝ 07:00-22:00: 2.4. Մեկ ավտոմեքենայի լվացման ծառայության մատուցման առավելագույն տևողությունը 40 րոպե: 2.5. Ծառայությունների մատուցման նպատակով լվացման կտրոնների տրամադրում՝ մեկ կտրոնը մեկ ավտոմեքնայի ամբողջական լվացման (առանց շարժիչի արտաքին և հարակից սարքավորումների լվացման) կամ շարժիչի արտաքին և հարակից սարքավորումների լվացման համար: 2.6. Մեկ ավտոմեքենայի համար ծառայության մատուցման սկիզբը Պատվիրատուի ներկայացուցչի բանավոր պահանջից 40 րոպեի ընթացքում: 3. **Ավտոլվացումների կամ նմանատիպ ծառայությունների քանակը՝ 60:**	դրամ	**162000**	1		

**ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Հավելված №2
«25» «12» 2020թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Սպասարդ» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Գ.Լուսավորիչ 3/3
ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 90011018646	ՀՀ 1570012422860100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02565302

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2021թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ծառայության մատուցման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «25» «12» 2020 թ.
Պայմանագրի համարը՝ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02»

Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2021 թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №2.1
«25» «12» 2020թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Սպասարդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «25» «12» 2020 թվականին կնքված № «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2021 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«25» դեկտեմբերի 2020թ. N ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02 պայմանագրի

ք.Երևան «25» «01» 2021թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գույլանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Սպասարդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2215-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2020 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2020 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Սպասարդ» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Գ.Լուսավորիչ 3/3
ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 1570012422860100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02565302
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«Սպասարդ» ՍՊԸ-ի տնօրեն
Գ.Գույլան	***Ա.Գևորգյան***
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված
«25» «01» 2021թ. կնքված
համաձայնագիր №1
№ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Գ. Գույան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Սպասարդ» ՍՊԸ-ի
տնօրեն
Ա. Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը**	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	50111180/1	Սեղան թափքով ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայություններ	-	64 000	64 000	144 000	144 000	144 000	224 000	224 000	224 000	304 000	304 000	304 000	**304 000**
2	50111180/2	Ամենագնաց ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայություններ	-	40 500	40 500	81 000	81 000	81 000	121 500	121 500	121 500	162 000	162 000	162 000	**162 000**
Ընդամենը			-	**104 500**	**104 500**	**225 000**	**225 000**	**225 000**	**345 500**	**345 500**	**345 500**	**466 000**	**466 000**	**466 000**	**466 000**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-21/02»» ծածկագրով պայմանագրում 2021 թվականի հունվարի 25-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Գնումը կատարվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու պայմանով,
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագիրը լրացվել է վճարման ժամանակացույց հավելվածով,
Փոփոխության հիմնավորում՝	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կնքված պայմանագիր: Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-529:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**